

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողը գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“)

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեղ ու ուր:

Հայտարարութիւնների համար վճարում են
խմբագրատնի բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1880 թւին

ԿԸ ՀՐԵՏԱՐԵՎՈՒ ԵՄԵՆ ՕՐ, բացի տոն և տոներին հե-
տեակ օրերից:

Լրագրի գինը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում
ենք ՍԵՓԵԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը
10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻՇՆ
ԽՄԲԵՐԵՐԵՐԵՐԸ մէջ:

ԵՄԵՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր:
Օտար քաղաքներից պէտք է գիտել հետեակ հասցեով ТИФ-
ЛИСЬ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեզանում ամեն բան անսպասակ է:—Ներքին
տեսու թիւն: Հայերը և նրանց քաղաքական
գաղափարները: Ներքին լուրեր:—Արտաքին
տեսու թիւն: Համակ թիւերից:—Սառն
լուրեր:—Մշակութիւն հեռագիրներ:—Հայտարարու-
թիւններ:

ՄԵԶԱՆՈՒՄ ԱՄԵՆ ԲԱՆ ԱՆՆՊԱՏԱԿ Է

Թիֆլիսի ամեն մի տան մէջ
կը գտնէք մի պիանո, ամեն
տան մէջ անուամբ և երգում են...
Բայց ի՞նչ համար,—ոչ որ չը
գիտէ: Թէ մեր դպրոցները և թէ
մեր ընտանիքները իրանց անհրա-
ժեշտ պարտաւորութիւն են հա-
մարում երիտասարդներին երա-
ժշտական կրթութիւն տալ—
բայց ի՞նչ նպատակով՝ իրանք չը
գիտեն: Այդ կրթութիւնը բոլո-
րովն աննպատակ է յայտնվում,
նա միայն ձեռի համար է տրվում
մեր նոր սերունդին:

Եւ այդ կրթութեան աննպա-
տակ լինելը յայտնվում է մանա-
ւանդ այն ժամանակ, երբ գալիս
է մեր քաղաքը մի որ և է յայտնի
երաժիշտ, կամ մի աշխարհահռչակ
երգչուհի տիկին: Արտի պէս...
Կոնցերտները գրեթէ դարդակ են
լինում... Ո՛ր են երաժշտութեան
մեր անթիւ սիրողները: Այդ տե-
սակ դէպքերում յայտնվում է որ
երեւելի աշխարհահռչակ տաղանդ-
ներին, Արտի կամ Պատտիին

լսելու համար մենք չունենք լսող-
ների բաւական մեծ կոնտինգէնտ:

Ի՞նչ հարկաւոր է ուրեմն այն
երաժշտական կրթութիւնը որ
մենք տալիս ենք մեր զաւակներին
թէ տանը և թէ դպրոցում: Ա-
ւելի լաւ չէր լինի բոլորովն ոչինչ
երաժշտութիւն չը սովորեցնել մեր
օրիորդներին և երիտասարդներին:

Արտի և Պատտի, որոնք երբ
որ Եւրոպայում կոնցերտներ են
տալիս, տեղ չէ ծարվում այն դա-
լիճի մէջ որտեղ նրանք երգում
են, տուեցին թիֆլիսում հինգ
կոնցերտ,—և թատրոնի դահլիճը
որ շատ մեծ չէ, ամեն անգամ
գրեթէ դարդակ էր լինում:

Այդ մեզ համար հանելուկ է
և մենք կարող ենք միայն երեք
պատճառներից մինը ընդունել:
Կամ թիֆլիսի հասարակութիւնը
նախապաշարված է դէպի նոյն
խիթ թատրոնի շինութիւնը, կամ
կոնցերտի մուտքի գները չափից
դուրս բարձր երեւացին նրան, կամ
մեզ մօտ դեռ պատրաստ հող չը
կայ այդ տեսակ նշանաւոր ար-
տիստներին լսելու:

Առաջին պատճառի վրա մենք
չենք էլ կամենում խօսել, այնքան
հրէշաւոր է երևում մեզ չը գնալ
մի երեւելի երգչուհու լսելու միայն
այն պատճառով, որ նա այս ինչ
մարդու դահլիճում է երգում: Գը-
ների բարձր լինելու մասին մենք
կը համաձայնվէինք այն ժամա-
նակ, եթէ տեսնէինք որ թիֆ-

լիսին, մանաւանդ հայր ինչպիսի
է: Բայց ընդհակառակն մենք
տեսնում ենք թէ հայր բոլորովն
չէ ինչպիսի իր փողը ոչ ուսաց
և հայոց ներկայացումների համար,
ոչ էլ կուրսերում ամեն օր կա-
տարվող սարսափելի թղթախաղի
համար, ոչ էլ զանազան յիմար,
անպէտք ծախսերի և շաշկու-
թիւնների համար: Եթէ ճշմարիտ
սէր լինէր դէպի երաժշտութիւն,
կարելի էր, վերջապէս, մէկ երկու
օր զոկել իրան թղթախաղից,
լստօից, կամ մի այլ շաշկութիւնից,
մէկ երկու անգամ չը գնալ թատ-
րոն, որ մեր ձեռքից չի փախչի,
—և գնալ լսել մի աշխարհահռչ-
ակ երգչուհու, որ իր կեանքի
մէջ մի անգամ միայն եկաւ և
այնուհետեւ երբէք էլ չի գալ
թիֆլիսի պէս մի հեռու տեղ...
Մնում է միայն վերջին պատ-
ճառը, որ միակ հաւանական է
թվում մեզ,—այն է—որ մեր բան
տարվայ երաժշտական ամբողջ
կրթութիւնը կատարելապէս վայր
ի վերջ և աննպատակ է և Ար-
տի ու Պատտիի պէս երգիչնե-
րին լսելու համար մեզ մօտ դեռ
ևս լսողների պատրաստ կոնտին-
գէնտ չը կայ, այդ տեսակ երա-
ժշտութեան համար դեռ ևս հո-
ղը պատրաստ չէ մեզ մօտ:

Եւ ճշմարիտ մի ժամանակ
մենք ունէինք իտալական օպերա,
և այն ժամանակ երաժշտական
զգացմունքը բաւական տարած-
ված էր մեր հասարակութեան
մէջ: Բայց օպերա վաղուց է ար-
դէն որ չունենք: Նրանից յետոյ
մենք ունեցանք օպերետ, որ ինչ-
պէս յայտնի է, փչացնում է մի-
այն երաժշտական նուրբ ճաշակը:
Մի ժամանակ թիֆլիսից բան-
ւորը, գործակատարը, կամ կին-
տոն շվացնում կամ երգում էին
եղանակներ իտալական և ֆրան-
սիական օպերաներից,—յետոյ ըս-
կեցին շվացնել և երգել Օֆէն-
բախի մօտիվները, իսկ այժմ էլ
ոչ մի երգ չէ լսվում ոչ մի տեղ:

Օպերայից յետոյ մեր քաղա-
քում հիմնված երաժշտական
ընկերութիւնը չը կարողացաւ գո-
յութիւն ունենալ, այնպէս որ
այժմ մենք ունենք միայն մի մաս-
նաւոր երաժշտական դպրոց և
կան նոյնպէս մի բանի անհատներ,
որոնք մասնաւոր աներում երա-
ժշտութեան դասեր են տալիս:
Բայց դրանց շրջանը շատ նեղ է,
իսկ մի հիմնարկութիւն, որ ամ-
բողի, մասսայի մէջ տարածէր
երաժշտական ճաշակը, ժողովր-
դացնէր երաժշտութիւնը,—մե-
զանում էլ չը կայ: Այսպիսով
մեր հասարակութիւնը որ մեծ
հակամն ունի դէպի երաժշտու-
թիւնը, յետ սովորեց երաժշտու-
թիւնից և երբ որ մի աշխար-
հահռչակ արտիստ, կամ արտիս-
տուհի գալիս են թիֆլիս, հարիւր
հազար բնակիչ ունեցող մի քա-
ղաքի մէջ նրանք չեն գտնում
լսողների այնքան մեծ թիւ, որ
մի ոչ շատ մեծ դահլիճն անգամ
չի լինէր...
Յիշենք այն ժամանակները,
երբ թիֆլիսից հայր մոռացած
լինելով իր մայրենի լեզուն խօ-
սում էր միայն փրացերէն: Երե-
ւակացեցէք ձեզ որ այն ժամա-
նակ մի մարդ գար և ուշադրու-
թիւն չը դարձնելով այն երեւոյ-
թի վրա որ մայրենի լեզուն կո-
րած էր մեր մէջ, ուղղակի սկը-
սէր հրապարակական դասախօսու-
թիւններ կարդալ թիֆլիսում:
Ի հարկէ մի մարդ չէր գտնվի
որ նրան հասկանար:
Այժմ մեզ պարզ է որ երա-
ժշտութեան մեր մասնաւոր դա-
սատուների բան տարվայ գոր-
ծունէութեան արդիւնքը զրօի
է հաւասար, եթէ նրանք այդ-
քան ժամանակամիջոցում չը կա-
րողացան պատրաստել մինչև ան-
գամ մի յայտնի շրջան երաժշ-
տութեան գնահատողներին: Եւ
մինչև որ մեզանում չը հիմնվի մի
մշտական հիմնարկութիւն, որ կը
ժողովրդացնէ մեր հասարակու-
թեան մէջ երաժշտութիւնը,—
ամենաերեւելի արտիստները Արտի,
Պատտի, Նիլսոն թէ Բուրինշայն,
կերպեն և կածեն դարդակ դա-
լիճների մէջ: Ահա թիֆլիսի
քսան թէ քսան և հինգ տարվայ
երաժշտական աշխատանքի ար-
դիւնքը: Նա հաւասար է զրօի:
Դրանից կարող էք եզրակացնել
որքան ծանր, որքան լուրջ, որքան
խոր արմատներ դրող, որքան տե-

Լողական է թիֆլիսցու ամեն մի մտաւոր կամ բարոյական շարժումը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՔԱՐՆԵՐԸ

Տաւն և ութերորդ դարու սկզբներում Մօրէից շատ հայեր ստիպվեցան փախչել մուսուլմանների հալածանքների պատճառով, և ապաստան գտան Վենետիկ հասարակապետութեան մէջ: Սենատը շնորհեց նրանց ս. Ղազարի բաւական ընդարձակ կղզին, որ գտնւում է ծանծաղուտների մէջ: Նրանք հիմնեցին այնտեղ մի վանք, սկսեցին մշակել կղզին, շուտով դարձրին նրանից մի ծաղկեալ այգի, և կառուցին գեղեցիկ շէնութիւններ: Գործի բոլոր յաջողութիւնը պատկանում էր Մխիթար սերաստացուն: Նաո բնական է, որ հայերի այդ խումբը ընդունեց պապին, բայց չը բաժանվեցաւ իր եկեղեցուց, պահպանելով հայոց ժամատացութեան բոլոր յատկանիշ ծէսերը: Մեր դարու սկզբում այնտեղ հիմնվեցաւ դպրոց և ակադեմիա, համալսարանի նման մի բան հայոց մանուկների համար, այլ և տպարան, որի մէջ տպւում էին զբոսը աւելի քան 15 լեզուներով: Բոլոր այդ հիմնարկութիւնները ամեն մասնով այն աստիճան ծաղկեցան, որ Մխիթարեանները Վենետիկ նահանգի մի քանի տեղերում այժմ ունեն բաւական հողային կալուածներ, որ ձեռք են բերել արծաթով: Նրանք հիմնեցին նաև միջնակարգ դպրոցներ Վենետիկում և Փարիզում, ուր պատրաստվում են հայոց մանուկները Ս. Ղազարի ակադեմիան մտնելու համար:

Տարակոյս չը կայ, որ Մխիթարեանները կեանք տուեցին հայոց գրականութեանը: Նրանք սկսեցին տպագրել զբոսը, որ զխառնարապետ վերաբերում էին Հայաստանին. նրանք 1836 թւին հիմնեցին հայոց առաջին լրագրի և աշխատում էին զարգացնել պարբերական գրականութիւնը: Այժմ Կ. Պօլսում գոյութիւն ունեն հայոց 18 պարբերական հրատարակութիւններ. շատերը հրատարակվում են հէնց Հայաստանում, և երկրագործի վրա չը կայ մի փոքր ի շատ նշանաւոր հայկական գաղթաշէնք, ուր չը ստացվէր հայոց լրագիր: Կ. Պօլսի հայոց և մասամբ Հայաստանի դպրոցների զարգացումը և յառաջադիմութիւնը շատ բանով պարտական է մխիթարեաններին: Տարակոյս չը կայ, որ նրանց մանկավարժութիւնը և գրականութիւնը գտնւում էին կրօնական յայտնի աղբիւրութեան ներքոյ, կրօնը, գունաւորված կաթօղիկական ներկերով, էր նրանց նպատակի յենակետը, այդ ազդեցութեան մէջ, որ տեղեցեցին նրանք: Բայց այդ չէր արդելում քաղաքական պատրիստիզմի զարգացնելուն, այո, առհասարակ վերջին տարիներում ուսումնարանական և տպագրական պրօպագանդայի այդ կրօնական բնաւորութիւնը սաստիկ թուլացաւ, մի կողմից Խոտալիայում կատարված քաղաքական յեղաշրջումների պատճառով, միւս կողմից «Արարատեան ընկերութեան» զարգանալու առիթով, որ իր բան միշտ հեռու է պահում կրօնականութիւնից:

Այդ երկու հիմնարկութիւնների գործիչները, անտարակոյս, ներկայացնում են հայերի մեծամասնութեան մտաւորական և գիտական հայացքները իրանց հայրենիքի քաղաքական դրութեան վերաբերութեամբ, և

նրանց զործողութիւններից ու խօսքերից մենք կարող ենք դատել այն բանի մասին, թէ ինչ են սպասում հայերը: Մխիթարեանների գրականութեան ուսումնասիրութիւնը, և առհասարակ երկու բաղմանդում և դէպի ամեն կողմ ծիւղաւորված ընկերութիւնների գործունէութիւնը ապացուցանում են մեզ, 1) թէ հայերը, որպէս մտաւորապէս զարգացածները, նոյնպէս և ժողովուրդը, հաւատում են իրանց թագաւորութեան վրկին վերածնելութեանը, հաւատում են նրա բաժանված մասների ի մի ձուլվելուն, և հաւատում են իրանց միացած քաղաքական անկախութեանը: 2) թէ նրանք համարում են իրանց ազգը այն աստիճան տկարացած, պետական կազմակերպութիւնը այն աստիճան քայքայված, որ ամենեւին չեն էլ մտածում իրացնել իրանց յոյսերը առանց որ և իցէ մեծ ինքնակալի օգնութեան. նրանք աւելի համեստ են իրանց վերականգնման մասին, ցանկանալով միացնել իրանց թագաւորութիւնը մի ուրիշ աւելի հզօրի հետ, այն պայմանով, որ նա ընդունելով նրանց իր հուշանաւորութեան ներքոյ, կը շնորհէր նրանց ինքնավարութիւն, և կը պահպանէր նրանց կրօնի, լեզուի ու սովորութիւնների անմատչելութիւնը:

Ի նկատի առնելով հայերի քաղաքական զգուշութիւնը և նրանց զբոսը երկրաւորութիւնը, այլ և աչքի առաջ ունենալով նրանց խաղաղասիրութիւնը և նրանց յարաբերութիւնները անցքերի և պատերազմների վերաբերութեամբ, որոնք անմիջական կերպով միշտ ֆլուսել են նրանց երկրին,—կարելի է հաւատալ նրանց ցանկացած երկրորդ գրութեան անկեղծութեանը: Եթէ հայերը չեն վրդովվում թուրքերի լծի տակ, ուրեմն հաղիւ թէ կարող էր լինել մի հիմք կասկածելու, որ նրանք կը մտածէին վրդովվել, խնայահիշելով մի մարդասէր և մի նոյն ժամանակ աւելի հզօր իշխանութեան ներքոյ:

Վերջապէս, տեսնելը, հզօր ինքնակալներից որի՞ վրա նրանք դրել են իրանց յոյսերը: Տաճկաստանի և Պարսկաստանի մասին, ի հարկէ, նրանք մտածել անգամ չեն կամենում: Մնում են Անգլիան և Ռուսաստանը: Անգլիան այժմ առել է նրանց իր հովանաւորութեան ներքոյ, կարելի է ապագայում դրանից կը հետևի նրանց համար որ և իցէ բարութիւն, բայց մենք խօսում ենք ներկայ ընդհանր մասին: Անգլիացիներին հայերը շատ փոքր են ճանաչում *) . նրանք զիտեն, որ անգլիացիք շատ անգամ արգելեցին Ռուսաստանին խորտակելու թուրքերի իշխանութիւնը. 1877 թւի պատերազմից յետոյ, որի հետևանքների մասին հայերը մեծ յոյսեր ունէին, Անգլիան վեր առեց նրանց իր հովանաւորութեան ներքոյ, բայց այն թշուառութիւնները, որ հասան նրանց ռուսաց զօրքերի դուրս գալուց յետոյ, Անգլիան չարգելեց: Բնական է, որ մինչև այսօր և որպէս ամբողջ 50—60 տարիների ընթացքում հայերը վերադառնում են Ռուսաստանի իշխանութիւնը Անգլիայի իշխանութիւնից: Եթէ նրանց վեճակը մէկից թեթեւացած է եղել յիշեալ ժամանակների ընթացքում, այդ եղել է Ռուսաստանի շնորհիւ: Ռուսները հրատարակեցին պատերազմ Տաճկաստանին, Հայաստանում մնալու և ռուսաց զօրքերը, և չը նայելով պատերազմին, հայերի դրութիւնը բարուրդեցաւ: Վերջացաւ պատերազմը, ռուսները տիրեցին Հայաստանի մի մասը, և այն հայերը, որ ընկան ռուսաց իշխանութեան ներքոյ, սկսեցին աւելի հանգիստ ապրել: Այդ բաւական չէ, ամեն անգամ, երբ Ռուսաստանը հրաւիրել է հայերին զաղթել Տաճկաստանից ռուսաց հօգի վրա, նրանք ընդունել են, մի քանի հա-

*) Հայերը անգլիացիներին շատ լաւ են ճանաչում, նրանց հետ ծանօթացել են աւելի քան կէս դար առաջ, Հնդկաստանում:

Ժան. Թարգ.

զար ընտանիքներ զաղթեցնելով: Ի՞նչ է սպասում նրանց Ռուսաստանում, նրանք զիտեն: Ամենեւին տարակոյս չը կայ, որ եթէ հայոց ամբողջ ցանկանում է ընդունել իր վրա մէկի գերիշխանութիւնը (ИГЕМОНИЯ), ի հարկէ այդ Ռուսաստանի գերիշխանութիւնն է: Հայոց ինտելիգենցիան մի և նոյն համոզմունքն ունի: Հայոց ամբողջ գրականութեան մէջ, և մխիթարեանների կամ արարատեանների գործողութիւնների մէջ արտայայտվում է ձրգտուն դէպի Ռուսաստանը:

Ինչ 1862 թւին պատահեց անձամբ լինել ս. Ղազարի կղզու վրա և խօսակցել մխիթարեանների հետ, թէ ծերունի պրօֆեսորների և թէ երիտասարդ ուսանողների հետ: Վերջիններից շատերը մեր զբաղի հայոց նահանգների բնակիչներ էին, և շատ ժամանակ չէր, որ նրանք մտել էին ճեմարանը: Ընդհանուր տպաւորութիւնը, որ մնաց իմ մէջ այդ բոլոր անձինքների հետ խօսակցելուց յետոյ, հաստատում էր իմ վերև յայտնած կարծիքը: Մխիթարեանները տպագրում են ռուսաց զբոսը, և ռուսացանում են ռուսաց լեզուն: Նաո երիտասարդներ խօսում են ռուսերէն, և նրանք պարծնում են այդ գիտութիւնով, և, եթէ չեն սխալվում, բոլորը առհասարակ վարվում են ռուս ճանապարհորդի հետ աւելի համակրութեամբ, քան թէ անգլիացու, ֆրանսիացու կամ գերմանացու հետ: Այսպէս է գտնել իմ անձնական կարծիքը, որը հաստատվում է և ուրիշներից, որոնք այցելութիւն էին գործել մխիթարեանների մօտ:

Ահա ինչ դրութեան մէջ է գտնվում հայկական խնդիրը, որի հետ, մեր կամքի հակառակ, խառնում են մեր անունը,—և որի մէջ, կարելի է մեր կամքի հակառակ, ըստիպված կը լինենք խառնվել: Իսկ թէ ի՞նչ կը դուրս կայ այդ խնդրից,—մենք յանձն չենք առնում նախադուշակիւ մենք միայն նկարագրելու մի էական փաստ:»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՒԽՈՒՅՑ մեզ գրում են որ երկու յայտնի ուստիացիք պ. Բ.—բէկ և Ս. Նիկ. մի թեթև բանի համար անբաւականութիւն են ունեցել միմեանց մէջ, որից յետ Բ.—բէկը զանգատվել է հայտարար դատաւորին իր ուստիացի ազգային վրա, բայց միւս առաւօտ արդէն հաշտված Ս. Նիկ. հետ Բ.—բէկը պաշտօնապէս յայտնում է հայտարար դատաւորին որ իր եղեկիպ զանգատը յետ է առնում, վամսորոյ և խնդրում է դատաւորին ազատել Ս. Նիկ. բոլոր պատասխանատուութիւնից, բայց հայտարար դատաւորը որոշել է անպատճառ կալանաւորել Ս. Նիկ. և ցցել քննութեան տակ: Ասում են որ Ս. Նիկ. և Բ.—բէկ զանգատ են ուղարկել սենատին դատաւորի անօրինակ արարքի վրա:

ՆՈՒԽՈՒՅՑ մեզ գրում են ևս որ նոյն հայտարար դատաւորի կարգադրութեամբ Նուխուստաստանական բաժնում խնդրագործներին արգելված է պաշտպանել իրանց դատերը փաստաբանների միջոցով, վամսորոյ ռուսաց լեզու չմտացող հայ և թուրք բնակիչները չը գիտեն թէ ինչ ա-

ՆՈՒԽՈՒՅՑ մեզ գրում են ևս որ դատաստանական քննիչ Բէկիչէփիլու կարգադրութեամբ Բէկիչէփիլու պատճառով կալանաւորած եօթը մարդիկներից մէկը, չը կարողանալով տանել միայնական կալանաւորութեան տաժաւութիւնը նորերս վախճանվել է, թողնելով անտէր իր բաղմազրուխ և սովալուր ընտանիքը: Ասում են որ մնացածների վիճակը ևս մեծ վտանգի մէջ է և պ. Բէկ-

ձիչէփիլին մեքոնում է բաղմաթիւ ցանկացողներին երաշխաւորութեան առնել խեղճ բանտարկեալներին:

Շարաթ օր, դեկտեմբերի 1-ին տիկին Արտո և պ. Պաղիլա տուեցին իրանց վերջին կօնցերաք Արծրունու թատրոնում: Կօնցերաքի արդիւնքի մի մասը յատկացրած պէտք է լինէր յօգուտ թիֆլիսի երաժշտական ուսումնարանի: Զարմանալի է միայն որ թատրոնում շատ քիչ ժողովուրդ կար: Միթէ ոչ բարեգործական նպատակը, ոչ էլ Արտոի պէս երեսիլ երգուհու ձայնը չէ դրաւում մեր հասարակութեանը, Վերջին կօնցերաքի ժամանակ տիկին Արտո ամենքին զարմացրեց երգելով մի հայերէն երգ, այն է «Գարուն» երգը:

Մեզ հաղորդում են ԱՆԱԼՔԱԼԱՔԻՑ, որ տեղացիներից մէկը օրերումս փորձել էր խանջալով ինքնասպանութիւն գործել: Նրան չէր յաջողվել կատարել իր մտադրութիւնը:

ԱՆԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ նորերումս մի պատանի ոտքի վրա կապած դանակով վիրաւորել էր մի գիւղացու: Ոտքի վրա դանակ կապելը երեխաների մէջ անգամ սովորութիւն է դարձել: Օրերումս երեխաների մէջ երկու փորձ է եղել ոտքի վրա կապած դանակով միմեանց վիրաւորելու համար, բայց մարդիկ շուտով վրա են հասել և դանակները երեխաներից խլել են:

ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՐԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական հայոց եկեղեցին այնպէս վատ է չինված, որ կտուրից անձրևը կաթում է: Ոչ դե չէ մտածուի եկեղեցին վերանորոգելու վրա, մինչդեռ այդ եկեղեցին բաւական փող ունի:

Մեզ գրում են ԵԿԱՏԵՐԻՆՍՈՒՐԻՑ, որ այնտեղ նոյնպէս թանկութիւն է: Առաջ ալիւրի պուդը 80 կ. արժէր, այժմ 1 ր. 50 կ. է ծախվում: Թանգութեան պատճառը արտասահմանից եկած պարսկերեն են, որոնք այստեղի է ժամնութեան մասին տեղեկութիւն ստանալով, եկել են և մեծ քանակութեամբ ալիւր են գնում:

Մեզ հաղորդում են ԹԵԼԱԽԻՑ, որ նոյեմբերի 29-ին թեմական տեսուչ պ. Բարխուդարեանը և ղրկեկտոր Սարկելեցիին այցելեցին տեղական ուսումնարաններին և երկուսն էլ անբաւական մնացին:

Մեզ գրում են ՍՂՆԱԽԻՑ. «Տեղացիները ունեն կուր, որտեղ տարէր հազիւ երկու անգամ ընտանեկան երեկոներ են լինում: Կուրը սառնում է լրագիրներ, որոնց իւրաքանչիւր տարի չը հաւանելով փոփոխում են: Անցեալ տարի ստացվում էր «Մշակ», բայց կարգադրողներ չը կային: Այս տարի «Մեղրու» ստացան, բայց նոյնպէս չէին կարդում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻՑ

Կ. Պօլս, 15 նոյեմբերի

Այսօր մենք կապենք մի այնպիսի միջնորդութիւն մէջ որ անյուսակն նորութիւններով լի է:—Մէկ կողմէ թուրքերուն դանդաղութիւնն իրենց խոտաւմեան և պարտականութիւնները կատարելու մասին, միւս կողմէ Անգղիոյ կառավարութեան սաստիկ տնչանքը փոքր-Ասիոյ մէջ իր քաղաքական յատկապէս գործադրութիւնը սկսելու, երկու կառավարութեանց յարաբերութիւններուն այնպիսի մի գոյն տուին որ պահ մը ամեն զք պատերազմի երկիւղներ սկսաւ զգալ: Եւ այս ամեն սառնութեան պատճառ, ըստ երևոյթին, հայերն եղած են: Շատ, խիստ շատ ծանծաղամտ մարդ պէ՛տք է լինի կարծելու համար թէ Ասիոյ մէջ չարաւուրդ հայոց վիճակին բարւոյն համար է որ Լոնդոնը յէն Ստամպուլի այնքան սպառնանքներ եղան: Այս բոլորէն Անգղիացաց մտածողքին և հոգածուն

Թեան համար եթէ կայ մի բողոքողին անկարողութեամբ առաքելայն արն ալ Հայաստանն ու հայերն են:

Հայրենասէրը, ամեն տեղ, շատ ուրախացան երբ լսեցին թէ Անգղիա, հանդիսաւոր պայմանադրութեամբ մը, իր վրայ կառնու հայոց բարորդութեան խնդիրն Ասիոյ մէջ, և Պետական դաշնագիրն ոչ անպակ կարողութեամբ համարեցին որչափ կարողութեամբ հաւաքաբար գործողութիւնն Ասիոյ մէջ հայերուն անպակ օգուտներ չը պիտի տայ որչափ Անգղիոյ առանձինն և ջոկ գործելը, զոր կարողութեամբ պայմանագիրն այս վերջին տէրութեան վրայ պարտք կը դնէր: Բայց որ պիտի դար որ յոյս 4-ի դաշնակցութեան բուն օգին պիտի ելլէր յերևան: Արդէն շատերը կասկածեցին Ենի Անգղիոյ հովանաւորութեան հայոց օգուտներ ըլլալը վերջին, այդ կասկածն որ օրի ճշմարտութեան գոյն սկսեցին քննարկել: Եւ այսօր սա ևս կը նշմարենք թէ Անգղիա կարողութեամբ դաշնակցութեամբ ուղեց իբրև թէ ամբողջ Գործ-Ասիան իր հովանաւորութեան ներքեւ առնուլ, մինչդեռ իր միտքն էր իր իշխանութեան համար ապահովել նա մանաւանդ այն նահանգներն, որոց նա անմիջական պէտք ունի: Այդ նահանգներն են Սուրիան և բոլոր այն երկիրները որ կը գտնուին Չէքոսլովանի, Մակեդոնի, Երզրումի, Պապագոյի և պարսից ծովին միջև: Այս գաւառներն անոյ կարեւոր են որ Հնդկաստանի ճանապարհը միայն անոնց մէջէն կարող է անցնել: Վերջինս գիտնէին հետ կը տարածուին Տարուսան երկրը, սկիզբն առնելով Չէքոսլովանի ստորոտէն, դէպ ի հիստի կերկարին և կը կազմեն մի ամենահաստատ պատուար հիւսիսէն ելող թշնամիաց առջև: Գործ-Ասիոյ միւս մասերուն շահուց Անգղիա այնքան անտարբեր է որ երբ մէկ քանի անգամ խորհուրդներ յայտնուեցան Վ. Պալմէն ցէնդկաստան երկաթուղի մը շինել, անգղիական կառավարութեան կողմէ զրկուած երկաթափերը, չը գիտենք ինչ հրաշքով, ամենն ալ միաբան ընդհանուր թիւրքիայի համար աւելի շահաւոր դուր են երկաթուղիներն գոյնը Սուրիոյ երկրը հաստատել, և դիմը Տիարպեղիքէն Մոսկու և Պաղատան անցնելով: Իսկինտերուն վերջացող երկաթուղի մը, ունենալով իր դէպ, Միջերկրականին մէջ, Վիպրոս կղզին, այսինքն Անգղիոյ հրաշքն էր, թշնամի, վառօդի, զենքի և այլն միջերանցը (dépôt) անշուշտ աւելի Անգղիացոց պիտի ծառայէ քան թէ թիւրքիայի ժողովրդին: Այս ամենը լաւ է Անգղիոյ համար, որ Ռուսիոյ հետ պատերազմ ընելու հաւանականութիւնը միշտ մօտիկ կարծելով, ուշք կը դարձունէ իրեն ամենահարկաւոր այդ երկիրներուն վրայ, հիւստիստներ կը զոյնէ որը ամենն ալ Վերջին վիճի գլխաւորական բարձրի աշակերտներ են, հրաման կուտայ անոնց որ երկրին պատերազմական հանգամանքներուն տեղիկանան, բայց մենք, հայեր, այդ ամեն շարժումներէն, պատրաստութիւններէն ինչի պէտք է որ ուրախանանք: Վերջինս չեալ այն դիմն որ իբր ռազմագիտական սահման պիտի ծառայէ պատերազմի առին, Գործ-Ասիոյ մէջ, մեզ ընելը ծառայութիւնը սա պիտի լինի որ թիւրքիայի Հայաստանի հայերն այս անգամ ալ երկու մասի պիտի բաժնուին, իբրև թէ արդէն չափազանց կոտորակներու վերածուած չը լինէին հայերը: Ամենին անհիմն և անբանաւոր չէ կարծել, նա մանաւանդ երբ իշխանք թէ լոյսարայի կառավարութիւնը միշտ այդ երկրներն ունենալ կը ցցունէ, թէ օրին մէկը Հայաստան կարող է աւադարէզ դառնալ նոր մի արեւելեան պատերազմի, նոյնպէս անհիմն չէ կարծել թէ, կամ փոխադարձ զինջողութեան մը շնորհիւ և կամ պարտութեան պատճառաւ, կարելի է լինել որ Անգղիոյ վերջինս չեալ Չէքոսլովանի, Երզրում, Պապագոյի ռազմագիտական զինքն մէջ միայն ստիպուի ամբողջութիւն և միւս, ինչպէս Տրապիզոնի, Երզրումի, Սուրիոյ, Կիւստիայի գաւառաց այլ ևս չը խառնուի: Այս արդէն ուր կը մնան հայոց բախտը վերաջինելու յոյսերը:

Անգղիան, այո, պայմանադրեց պաշտպանել ամբողջ Գործ-Ասիան, բայց այդ ըսել չէ թէ, երբ նա տեսնէ ամբողջին տիրապետելու անկարելիութիւնը, չը պիտի ջանայ իր ձեռքին մէջ պահելու իբրև իրեն մի սեպականութիւն գոնէ այդ վերջինս չեալ մասն, որուն այնքան պէտք ունի Հնդկաստանի ապահովութեան համար: Նրա բուն թաղաքականութիւնն որ ի սկզբն Ասիան երկրորդ Հնդկաստան մը ընել էր, այս ուղղութիւնը պիտի բռնէ հէնց այն վայրկեանէն, երբ կը տեսնէ թէ իր նպատակին չը հասնի: Ուստի նա, անգամ մի որ տէր կը լինի իր ցանկացած մասին, փոքր պիտի ընէ արդեւոր միւս նահանգներու ժողովրդոց ինչ փառ կամ լաւ վիճակ պիտի սահմանուի: Ահա Անգղիացոց հայերուն համար պատրաստած գեղեցիկ քաղաքական հեռանկարը: (perspective) Յնձալաւ, ճշմարտիւ, շատ լաւ պատճառներ ունենք:

Հիմա հիմա, Անգղիա չը գիտէր ինչպէս գործէ Գործ-Ասիոյ մէջ: Կը հրապարակէր միւս տէրութիւններն որ իրեն հետ միաբանութեամբ ճնշում բանեցնեն թուրք կառավարութեան վրայ, բարենորոգմանը գործադրութեան համար: Միւս տէրութիւններն ալ, Ալբանի համար, տաք միտքէն մաշմիքը հանել չեն ուղեր: Պ. Ֆորսթըր, ազատական կուսակցութեան պարագլուխներէն մին, ի խօսքէ մէջ, արտասանեց վերջերս մի երկար քաղաքական ճառ, որու մէջ կըսէ. «Ուստի մարաքաղաքաց մէջ, այս գործին (նախատրմիդին Պեղգիա երթալը) ընդունելութիւնն է թէ դատենք, ոչ մի ուրիշ պետութիւն չը պիտի միանայ Անգղիոյ հետ թուրքերը ստիպելու որ բարենորոգումներ կատարեն և մեր միջամտութիւնը (Թիւրքիոյ գործոց մէջ) շատ անվտանգութեամբ և նախանձով պիտի նկատուէր միւս տէրութիւններէ կողմէ, նա մանաւանդ Միջերկրականի սահմանակից Ֆրանսիայէն և Իտալիան: Եւ կը շարունակէ այսպէս. «Անգղիա Ասիոյ մէջ ուրիշ կերպիւ բարենորոգում չը կրնար ընել, բայց եթէ երկրակալութիւններով: Ըսել է վերջին վերջին Անգղիացիք այս կամ այն երկրորդ, ամենահարկաւոր պիտի նուաճեն, պիտի գրաւեն: Հայաստանը այս պարագային մէջ վերստին կը բաժանուի թէ չէ, հզօր հեղեղներուն կը թողունք գտնել:

Բարեբախտաբար, մեր այս յուսահատ վիճակին մէջ ալ, մի սփոփանք կարող ենք գտնել: Անտառակոյտ, մեր աղջկային բաղդը, խօսքս անհատականին համար չէ, շատ տխուր կը լինէր, եթէ միայն Անգղիա զայն որոշելու կողմէն լինէր, բայց վերջապէս թորներ, իրենց վիպասան-քաղաքացիներ Պեղգիայի տնտեսական միջոցներէն մէկը չը պիտի մնան, և յետոյ, երկրորդ բարեբախտութիւն մը, անգլիան, Եւրոպիոյ մէջ ուրիշ պետութիւններ էլ կան, որոց շահերը չեն ներքէր որ Անգղիա, իր ուղեւ ձեռք, Գործ-Ասիան իր ձեռքին մէջ պատուոցէ: Պեղգիայի կրնայ շարունակել առաջին պաշտօնեայ մնալու, բայց միւս Տէրութիւնը չը պիտի թողուն որ նա իր ուղեւ խաղերը խաղայ: Այս հակառակութիւններէն մեզի համար միայն բարեբախտ ծագել:

Ազատականը արդէն յայտնած են և վերստին կը կրկնեն թէ իրենք, եթէ իշխանութեան գլուխ անցնեն, առանձինն չը պիտի ուղեն գործել Գործ-Ասիոյ մէջ: Պ. Ֆորսթըր, իր կուսակցութեան կարծիքն այսպէս կը յայտնէ «Ժողովուրդ (անգլիացիներ) չեն բանեցուց կարող է: Բայց անկարող է թուրք բաշխներու ձեռքով թուրքերը լաւ կառավարելու: Գործ-Ասիան բարեկարգելու համար, ուրիշն պէտք պիտի լինի հոն նախ զրկել մեծամեծ գանձեր, յետոյ պաշտօնեայներ որ այդ գանձերը վառեն յետոյ վերջապէս բանակներ որ այդ պաշտօնեայները պաշտպանեն: Ահա մեզ կատարելու մի հակայական գործ, և բայց 200-250 միլիոն հպատակներէ, զոր Հնդկաստանի մէջ կը կառավարենք, պիտի ստիպուենք նաև կառավարելու Գործ-Ասիոյ անկառավարելի ժողովուրդները:»

Այս յայտարարութիւնը կարգաւոր յուսահատական ճիշդ չը հանենք ըսելով թէ Ազատականը եթէ Պեղգիայի տնտեսական անցնեն, ետակառութեամբ, պիտի թողուն զմեզ մեր թշնամ փոխական մէջ, խօսք մը, որով պ. Լէյթըն և պ. Մէլքէթ կուզեն շարունակ ահաբեկել պատրիարքը: Ահա ինչ կը յաւելու պ. Ֆորսթըր վերին ըսածին վրա. «Չը հետեւի, կըսէ պ. Ֆորսթըր, թէ Գործ-Ասիոյ և կամ Եւրոպիոյ մէջ բարենորոգումներ գործադրել տալէ պիտի հրաժարինք: Պետական դաշնակցին յօդուած մ'ունի որ այդ բանին համար մեզ իշխանութիւն կուտայ, և որոյ գործադրութիւնն այդ թշնամ աղջկայ յուսոյ նշոյլ մը պիտի տայ: Եւ կը շարունակէ ըսելով «Կարծես թէ, միակ միջոցն որով կարող պիտի լինիք ազատել, առանց մեծ գործողութիւններու, այն ստոյգ և անխուսափելի դէպքն է (թուրքերուն իշխանութեան չնչուելը) այն բոլոր Եւրոպիոյ ձեռք թուրքերուն վրա ճնշում բանեցնելն է:»

Մենք, հայերս, մեր սրտին բոլոր ուժով խնդրենք որ Եւրոպա հաւաքաբար Գործ-Ասիոյ մէջ գործէ, այն առին միայն մեր ինքնավարութեան խնդիրը վերստին վիճաբանութեան նիւթ կըլլայ և անշուշտ ի նպատակ մեզ լուծում կը ստանայ:

Ի խօսքէ մէջ, Տիւրք Տ'Արքայը էլ առնաբանեց, մեզ ամենքիս սիրելի այս աղին Լորտն որ հայոց խնդիրը մանրամասն իմաստասիրած, երբ կը պատրաստուէր մեր պաշտպանութիւնը, խորհրդարանին մէջ, ձեռք առնելու, Լորտ Տէրայի այն ժամանակուայ արտաքին գործոց նախարարը, յանուն անգլիական վտանգեալ շահուց, խնդրեց որ ազնիւ Լորտը բազմազգայ նախարարութեան վրա ինքն էլ մի նոր և ծանր բեռ չը յաւելցունէ: Տիւրք Տ'Արքայը, ինչով ալ առնէ թէ ինքն նախ և առաջ անգլիացի է, հապտ հայասէր, հաճել է լուի,

խոսք այս անգամ, երկի խնդրն աւելի հանգիստ ընելուն անգլիական շահուց մասին, բացէ ի բաց ամբաստանեց է Պիկտոֆիլդի կառավարութիւնն, ըսելով թէ նա միշտ մոռացած է հարստահարեալ ազգայնութեան շահերը:

Մարաշի բանտին մէջ տառապող զէյթունցի քաղերն արձակուեցան: Սուրբանը, իր ամենողորմ գիտելեան սովորութեանց համաձայն, լիակատար ներումն չնորհեց նոյա, և նորա էլ յաղատն ի Չէքոսլովանի դարձելու անշուշտ եկեղեցեաց մէջ Սուրբանին կենացն աղօթք կընեն և Չէքոսլովանի ալ սահմաններն էլ աւելի ընդարձակելու ուխտը: Վառէն մասնաւոր նամակներ կը գրեն թէ քիւրդերը, կառավարութեան կողմէ գրգռուած, հայ գիւղացիները բռնելով, նոյա քիթն ու աւանջները կը կտրեն և կըսեն «գնացէ՛ք հիւսկա-տոններուն պատմեցէ՛ք ինչ որ տեսաք»—Անգղիոյ հիւսկատոն պ. Գլէյթըն կը պահանջէ վառի կուսակալին որ իրեն «մեղաց» ըսէ, վառի գի հիւսկատոնը խնդրեց է կուսակալին որ աղքատ գիւղացիներուն ցորեն տրուի, ինչպէս որ յառաջ այսպէս խոստում մը եղեր էր կառավարութեան կողմէ, բայց կուսակալը պ. Գլէյթընին «անցիր ճանապարհ» Գլայտին չէ թէ պատուոյ այս փափուկ խնդիրն ինչպէս կարգադրուեցաւ ըսել էր: Վառ չէ այս, ca commence, ինչպէս կան Ֆրանսիացիք, միայն չը գիտենք թէ «ou ca finira»

Չինուորագրութեան խնդիրն իր աճիւնին մէջէն վերստին ծնունդ առաւ: Թեկուս հեռագրուեցաւ ձեզ թէ Եւրոպի պալատին մէջ մի յանձնախումբ կազմուեց է բանակին մէջ բարենորոգումներ մտցնելու համար, և թէ որոշած է որ զինուորական ծառայութիւնն պարտաւորութիւն լինի Սուրբանին ամեն հպատակաց համար, առանց կրօնի և ցեղի խտրութեան: Ամեն օսմանցի (Սիւսանթ բաշայէն իմը, մենք ամենքիս այս տիտղոսը կը վայելենք) ստիպու է 20 տարի ծառայել, բայց 3 տարի հեծելազօրին մէջ և 2 տարի իբր հետեակ: Եւ հիմա փաշայի օրով երբ զինուորագրութեան առաջարկն եղաւ, ազգային ժողովը, աւելի ճշգրէ, Կրօնական ժողովը չընդունեց զայն, շատ իրաւամբ, որովհետեւ այն ժամանակ պատերազմ կար և թուրքերը զմեզ անխնայ կտորել պիտի տային, առանց ի փոխարէն մեզ իրաւունք մը կամ առաւելութիւն մը տալու բայց պէտք է խոստովանել թէ կրօնական ժողովին մերթելու համար յառաջ բերած փաստերը շատ անտեղի էին: Մեծ մտմտութիւնն սա էր թէ բանակին մէջ մեր քրիստոնեայ հայերն ինչպէս պիտի կատարեն իրանց կրօնական պարտքերը,—մինչդեռ էն կարեւորն էր ըսել «Չինուորագրութիւնը մի մեծ պարտք է, հայերն այդ պարտքն իրենց վրայ առնելով, կը պահանջեն ի փոխարէն բոլոր այն իրաւունքները զորս թուրքերը կը վայելեն: Ուստի միշտ էլ չը տար այդ իրաւունքները, մենք ալ ձեզ զօրք չենք տար»:

Տեսնենք թէ այս հեղուք, անցեալ անգամէն աւելի վարպետ և քաղաքագէտ պիտի երթան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Московскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է որ Հնդկաստանում գտել են մի նոր տեսակ մետաքսի (շերամի) որի խուր անուանված, որ շատ գեղեցիկ և սովորական չերամի կոկորդիլներից աւելի ամուր կողմն է պատրաստում: Խուսուրի մի գեղեցիկ յատկութիւնն էլ այն է, որ նա շերամի պէս ոչ թէ միայն մի տեսակ բոյսով է կերակրւում, այլ տամանիկու առանձին առանձին տեսակ բոյսերով, որոնք հեղուկութեամբ զարգանում են տաք երկրներում: Այս լուրը հաղորդել է Մոսկվայի շերամագործական կոմիտէին Իտալիայի Գեղարու քաղաքի ռուսաց հիւպատոսը, յայտնելով մի նոյն ժամանակ, որ Իտալիայում արդէն սկսել են փորձեր անել խուր պահելու համար, ինչպէս և Եւրոպայի հարաւային մասի մի քանի այլ կողմերում: Ռուսաց կառավարութիւնը ևս իր կողմանէ գրել է Իտալիայի հիւպատոսին որ ուղարկէ այդ որիի սերմերը Ռուսաստանում ևս նրան մեծացնելու համար փորձեր անելու:

Գոկտօր կիւլէրտի խմբագրութեամբ հրատարակված գերմանական «Globus» ազգագրական ամսագիրը իր № 21 մէջ տալի է նորերուն Գրիգոր Արքեպիսկոպոսի գերմաներէն լեզուով թարգմանած բեր- չիւրից քաղուածները: Ամագիրը պատկերազարդ և ազգագրական լինելով, թողնում է Գրիգոր Արք-

բիսկոպոսի դատարանութեան քաղաքական մասը և արտատպում է միայն նրա մէջ պարունակված տնտեսական և ազգագրական տեղեկութիւնները:

Ամեն մի համարում թողնում ենք հեռագիրներին համար կէս կօյնի չափ ազատ տեղ: Այս անգամ էլ թողեցինք տեղ, բայց ահա երեք օրվայ մէջ շատ քիչ հեռագիրներ ստացանք և ստիպված ենք ազատ տեղ լցնել խառն լուրերով:

Շնորհակալութեամբ ստացանք Ախալցխայից մի ընծայ պ. Մեծատունեանից: Ընծան՝ ասեղնագործած այցելական տոմարներն են:

ՄՇԱԿԻՍ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Թիֆլիս. Անճառօթ. Լաւ չէ որ կեղծ նամակ էք շինում, իբր թէ Հանգուցեայի ձեռքով գրած լինէր: Շատ լաւ գիտէք, որ մեռածից հարցնել չենք կարող փաստը վերաստուելու համար:

—Թիֆլիս. Մ. Ա. Պ. Կը հաշուեք թէ ինչքան տարվայ մէջ 52 բուբ 10 միլիոն կը դառնայ և ձեզ կը պատասխանենք:

—Մեծ-ՂԱՐԱՔԼԻՍԱ. Դարաքիսեցի. Աւելի լաւ է սպասէք երկու ամիս և յետոյ գրէք երիտասարդի մասին: Այն ժամանակ դուք ձեր նամակը աւելի որոշ կը լինի:

—Երզրում. Մ. Նամակը հասցրինք: Ցանկալի կը լինէր, որ այդտեղի բողոքականների մէջ տարածվէր մեր լրագիրը: Հաւատացած ենք, որ առաջվայ նման դուք շարունակում էք հասկացնել ժողովրդին ազգութեան և կրօնի տարբերութիւնը:

—ՄՍՍԿՎԱ. Ջ. Մ. Յայտարարութիւնը կը տարածենք, բայց միւս յանձնարարութիւնները չենք կարող կատարել:

—ԱԽԱՅԻՍ. ***. Քանի անգամ խնդրել ենք պարզ գրել: Ձեր նամակները անկարելի է լինում կարգաւ: Այդպէս գրված բոլոր նամակները առանց կարգաւոր զամբիւղը կը գրցենք:

—ԲԱԳՈՒ. Հայ. Նամակը չենք տալի, որովհետեւ ձեր ազգանունը ստորագրված չէ: Գրցեցինք զամբիւղը:

—ՂԱՐԱՔԼ. Մ. Ա. Խմբագրական զամբիւղը բողոքական երկիւղալի չէ այն մարդկերանց համար, որոնք փորք ի շատէ օրինաւոր գրել գիտեն: Մենք օգուտ ենք բաղում իւրաքանչիւր նամակից, որ փորք ի շատէ հետաքրքիր է կամ լուրեր ենք քաղում, կամ փոփոխութիւններով տպում ենք: Բայց աւելորդ և անպէտք թղթերը ևս պէտք է մի տեղ գցել:

ՄՇԱԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10նոյն, 1/12 զեկտեմբերի: Երէկ 10,000 անգլիացիներ Կարուլի մօտ յարձակվեցան անգլիական արտիլերիայի և հեծելազօրի վրա, կռիւն ստորափելի էր. անգլիացիներից չորս թշնամիներ խլելցան, բայց յետոյ անգլիացիք նորից խլեցին: Գնեքալ Բօքթոս յայտնում է, որ տեղացի ցեղերը միացել են անգլիացոց դէմ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 նոյեմբերի: Պետական բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 50 1/2 կ., երրորդ 94 ռ. 62 կ., չորրորդ 93 ռ. 75 1/2 կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 232 ռ. 50 կ., երկրորդ 267 ռ. 55 կ., առաջին առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ռ. 62 կ., երկրորդ 90 ռ. 37 կ., ոսկի 7 ռ. 85 կ.: Ռուսաց 1 բուբ Լօնդոնի վրա արժէ 25,04 պէնս: Տրամադրութիւնն ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԽԻՐՈՒՆԻ

